

Քվեարկողի ձեռնարկ

Այս առիթով, Քեպեքի Ընտրական Գլխավոր Ցանձնախումբի Գրասենեակը կը Քվեքեկի Գլխավոր Ընտրական Գրասենյակը տեղեկացնում է Ձեզ Ձեր իրավունքների մասին:

Ո՞վ կրնաք քուէարկել:

Քուէարկել կարենալու համար, ձեր անունը պետք է գրանցուած ըլլայ ընտրական ցանկին վրայ եւ ընտրութեան օրը ամբողջացուցած ըլլաք հետեւեալ պայմանները.

1-Ըլլալ 18 տարեկանէն վեր: 2-Ունենալ գանատական հպատակութիւն: 3-Վերջին վեց ամիսներուն բնակավայր հաստատած ըլլալ Քեպեքի մէջ:

Ձեր անունը ընտրական ցանկին վրայ է:

Այս մէկը կրնաք հաստատել ստուգելով ձեր հասցէին ուղարկուած մասնակցութեան ծանուցումը:

Ինչպէ՞ս կրնաք արձանագրուիլ ընտրական ցանկին վրայ:

Պետք է որ ներկայանաք վերաքննութեան գրասենեակ արձանագրութեան խնդրագիր ներկայացնելու համար եւ կամ ընտրական ցանկին վրայ ճշդումներ կատարելու համար: Ձեր անունով խնդրագիրը կարող են ներկայացնել ձեր կողակիցը, հարազատներ եւ կամ ձեր հետ բնակող ոեւէ անձ:

Ձեր խնդրագրին հետ պետք է ներկայացնել ինքնութիւն հաստատող երկու փաստաթուղթ, այլապէս խնդրագիրը կը մերժուի:

Առաջին փաստաթուղթ

Առաջին փաստաթուղթը պետք է կրէ ձեր անունը եւ ծննդեան թուականը: **Օրինակ՝** ծննդեան վկայագիր, Քեպեքի առողջապահական քարտ, գանատական անցագիր:

Երկրորդ փաստաթուղթ

Երկրորդ փաստաթուղթը պարտի ցոյց տալ ձեր անունն ու բնակավայրը: **Օրինակ՝** ինքնաշարժ վարելու արտօսագիր, հեռաձայնի կամ ելեկտրականութեան վճարագիր:

Ո՞ր կը գտնուի վերաքննութեան գրասենեակը:

Վերաքննութեան գրասենեակի հասցէն եւ ժամերը նշուած են ձեր հասցէին ուղարկուած մասնակցութեան ծանուցումին վրայ:

Ուշացած է՞ք:

Եթէ արձանագրութեան կամ ճշդումի ձեր խնդրագիրը ուզէք ներկայացնել վերաքննութեան յատկացուած ժամանակաշրջանէն ետք, ապա պետք է կապուիք ձեր շրջանի ընտրական յանձնախումբի պատասխանատուին հետ, որ ձեզ տեղեակ պիտի պահէ վերաքննութեան յատուկ նոր թուականէն եւ վայրէն: Այս ընթացքին, **քուէարկողը անձնապէս միայն** կարող է խնդրագիր ներկայացնել:

Կարևոր ծանուցում: Հատուկ վերանայման ընթացքում Ձեր անվան գրանցումը ընտրացուցակում չի ենթադրում նախնական քվեարկությանը մասնակցելու Ձեր իրավունքը: Դուք, սակայն, քվեարկելու իրավունք ունեք ընտրությունները վերահսկող գրասենյակում քվեարկության օրերին և ընտրության օրը:

Քուէարկութեան թուական եւ վայր:

Քուէարկութեան քանի մը օր առաջ պիտի ստանաք յիշեցումի թղթիկ մը ուր կը նշուի քուէարկութեան թուականն ու վայրը: Քուէարկութեան օրը հաճեցէք ներկայանալ նշեալ հասցէին՝ առաւօտեան ժամը 9:30 - Էն երեկոյեան ժամը 8:00 - ի միջեւ: Կարող էք նաեւ քուէարկել նախընտրական շրջանին: Նախաքուէարկութեան վայրն ու թուականը նշուած են ձեզի ուղարկուած մասնակցութեան ծանուցումին վրայ:

Նորություններ՝ Դուք ևս հինգ օր ունեք քվեարկության համար:

Դուք կարող էք քվեարկել քվեարկության կամ նախնական քվեարկության օրը: Դուք ունեք ևս հինգ օր ընտրությունները վերահսկող գրասենյակում կամ նշված գրասենյակներից որևէ մեկում քվեարկելու Ձեր իրավունքը իրագործելու համար: Եթէ ցանկանում եք տեղեկանալ Ձեր ընտրատեղամասի բացման օրերի և ժամերի մասին, խնդրում ենք այցելել մեր Ինտերնետային կայքը կամ կապվել մեր Տեղեկատվական Կենտրոնի հետ:

Ինչպէ՞ս քուէարկել

Առաջին Ընտրական մարմնէն պաշտօնատար մը կը ստուգէ ձեր անունը մասնակցութեան ցանկին վրայ:

Երկրորդ Ձեր ինքնութիւնը կը հաստատէք ներկայացնելով վերոնշեալ փաստաթուղթերէն մէկը:

Երրորդ Ձեզի կը տրուի քուէարկութեան թղթիկը:

Չորրորդ Կ'առանձնանաք քուէախցիկին մէջ գաղտնաբար ձեր քուէն տալու համար: Քուէարկութեան թղթիկին վրայ կ'արձանագրէք միմիայն մէկ շրջանակի մէջ գործածելով միայն ձեզի տրամադրուած մատիտը:

Հինգերորդ Կը վերադառնաք սեղան:

Վեցերորդ Ձեր քուէն անձնապէս կը գետեղէք քուէատուփին մէջ:

Անկարող է՞ք տեղափոխուիլ:

Եթէ առողջական պատճառներով անկարող եք տեղափոխուիլ, կրնաք քուէարկել ձեր բնակարանէն: Այս ընելու համար, պետք է գրաւոր խնդրագիր մը ներկայացնել ձեր շրջանի ընտրական պատասխանատուին: Արձանագրութեանց տեղեկություններու գծով հաճեցէք կապուիլ Ընտրական Գլխավոր Ցանձնախումբի Տեղեկատուական Գրասենեակին հետ:

Քեպեքի մէջ ո՞վ է ընտրութիւն կազմակերպող մարմինը:

Քեպեքի Ընտրական Գլխավոր Ցանձնախումբի Գրասենեակն է, որ անկողմնակալ մարմին մըն է եւ որ կ'օժանդակէ ձեր՝ քուէարկողի իրավունքներու գործադրութեան:

Հարցումն է՞ր

- Այցելեցէք Ընտրական Գլխավոր Ցանձնախումբի կայքէջը՝ www.electionsequbec.qc.ca.
- Կապուեցէք Ընտրական Գլխավոր Ցանձնախումբի Գրասենեակին հետ հեռաձայնելով ձրիաբար՝ **1 888 353-2846** թիւին.
- Յղեցէք ձեր էլեկտրոնիկ նամակները (Ե-նամակ) Ընտրական Գլխավոր Ցանձնախումբի Գրասենեակին՝ info@electionsequbec.qc.ca.

Կարևոր: Քուէարկել կարենալու համար հարկ է հաստատել ձեր ինքնութիւնը՝ ներկայացնելով հետեւեալ փաստաթուղթերէն մէկը.

- 1- Առողջապահական քարտ
- 2- Ինքնաշարժ վարելու արտօսագիր
- 3- Գանատական անցագիր
- 4- Վկայագիր բնիկ ամերիկացիութեան
- 5- Գանատական բանակի անձնագիր

